ՓԱՐԱՄԱԶ (ՄԱՏԹԵՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ)

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

XIX դարի վերջերի և XX դարի սկզբների հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկը՝ նշանավոր հնչակյան Փարամազը, ծընվել է 1863 թ. Մեղրիում։ Սկզբնական կրթությունը ստանում է ծննդավայրի տարրական դպրոցում, ապա 1878 թ. սեպտեմբերին ընդունվում է էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որտեղ ուսանում է մինչև 1883 թ. վերջը, երբ «ըստ որոշման ուսուցչական ժողովոյ արտաքսվեցավ յաշակերտութենե 'ի 29 դեկտ. 1883 ամին»[1]։

Հայտնի է, որ 1870—1880-ական թթ. Ռուսաստանում ավելի աշխուժացան հեղափոխական տրամադրությունները, որոնք իրենց ոլորտի մեջ առան նաև Անդրկովկասի երիտասարդությանը։ Հատկապես ուժեղացան ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների հուզումները, որոնք տարածվեցին Թիֆլիսի, Գորիի, Բաքվի, Շուշու, Երևանի և այլ վայրերի ուսանողների և աշակերտների, այդ թվում նաև 1874 թ. հիմնված էջմիածնի ճեմարանի սաների մեջ։ Ճեմարանում առաջին հուզումները սկսվեցին 1878 թ. փետրվարին, որոնք պարբերաբար բռնկվեցին նաև 1879, 1880, 1881, 1882 և 1883 թթ.։ Ուսանողները բողոքում էին իրենց ծանր վիճակի, ինչպես նաև վանքում և ճեմարանում գոյություն ունեցող հոռի բարքերի դեմ։

Հեռանալով էջմիածնից Փարամազը արդեն 1884 թ.[2] սկսում է դասեր տալ Հին Նախիջևանի հայկական դպրոցում, որտեղ և ծանոթանում է Ներսիսյան դպրոցի շրջանավարտ, ուսուցիչ Սապահ Գուլյանի (Ստեփան) հետ։ Փարամազի այդ տարիների գործունեության մասին Ս. Գուլյանը հետագայում գրում է. «Քաղաքի երիտասարդությունը՝ ծածուկ ժողովներ կազմելով, ագահությամբ լսում էր նրա դասախոսությունները։ Դասախոսը համակ բոց, կրակ էր, նա բոլորի սիրտը իր հետ ուներ»[3]։

Շատ չանցած Փարամազը Հին Նախիջևանից տեղափոխվում է Ջահուկ (Ճահուկ-Ջահրի) գյուղը, որի շրջապատում հայկական բնակչություն ունեցող շատ գյուղեր կային։ Այստեղ նա սկսում է զբաղվել ուսուցչությամբ և մտադրվում փոխադրվել Արևմտյան Հայաստան և աշխատանք տանել թուրքական դաժան լծի տակ հեծող արևմտահայերի շրջանում։ 1895 թ. նա Արդաբիլ (Արտավիլ-Էրտիպիլ) քաղաքում էր։ Ջնայած հայերը այդտեղ մի քանի հարյուր հոգի էին, սակայն ունեին եկեղեցի, ուսումնարան, գրադարան և թատերական մի փոքրիկ սրահ։ Փարամազը Արդաբիլում մնացել է մեկ տարի, որից հետո 1896 թ. նա Սալմաստում էր, որտեղ XIX դարի 90-ական թթ. կար բավական խիտ հայ բնակչություն։ Այդ թվերին Սալմաստը ուներ 24 գյուղ՝ 1531 տնտեսությամբ և 9172 հայ բնակիչ[4]։ Այդտեղ ժողովրդի հիմնական զբաղմունքը այգեգործությունը և զանազան արհեստներն էին։ Մինչ Փարա-

---

1 ՀՍՍՀ ՊԿԱ, ֆ. 312, ց. 1, դ. 122, թ. 78։

2 Նույն տեղում։

3 Փարամազ. Զեռքերդ վեր կամ Հուղուպրիստները. Շիքակո, 1917, էջ Գ—Դ։

4 «Արարատ», նոյ.—դեկտ., 1898, էջ 505։

մազի այնտեղ ժամանելը սալմաստցիների շրջանում հայրենասիրական և ազատագրական գաղափարներ էին քարոզել Ալեքսանդր (Վարդան) Գոլոշյանը, Կարապետ Գուլակսըզյանը, Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան) և, վերջապես, Սալմաստը տվել էր այնպիսի մեծանուն վիպասան, ինչպիսին էր Րաֆֆին։

1896 թ. նոյեմբերի 18-ին Սալմաստից ղստերը՝ Իսկուհուն ուղարկած իր նկարի վրա Փարամազը գրել է. «Աղջիկս, Իսկուհի ջան, առ այս պատկերը, հիշիր հորդ և գնա նրա ճանապարհով, որը թեև փշոտ, բայց դեպի երջանկության ասպարեզն է տանում»[5]։ Ժամանակակիցներից մեկը սալմաստահայության շրջանում Փարամազի տարած գործունեության մասին գրում է. «Առաջին անգամ էր, որ տեսնում էինք ընկեր Փարամազին, երիտասարդ, վառվռուն, գանգրահեր, ուներ երկար մազեր և սիրուն փոքրիկ մորուք, վերին աստիճանի համակրելի դեմքով ու արտահայտությամբ... խոսում ու պատմում էր շատ ու շատ դեպքերի ու պատահարների մասին... ու հենց առաջին անգամ էր, որ որոշ ու հասկանալի բառերով լսում էինք Քարլ Մարքսի ու գիտական սոցիալիզմի մասին»[6]։

Որտեղի՞ց էր Փարամազը ծանոթացել գիտական սոցիալիզմի հիմնադիր Կարլ Մարքսի աշխատություններին։ Հավանաբար Ա. Նազարբեկի թարգմանած և 1894 թ. «Գաղափարում» հրատարակած «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երկու գլուխներից և Գ. Վ. Պլեխանովի ռուսերեն թարգմանած Կ. Մարքսի աշխատություններից։

1896 թ. տեղի ունեցավ Վան քաղաքի բնակչության հերոսական ինքնապաշտպանությունը։ Դրանից հետո Վանի հարյուրավոր երիտասարդներ բռնեցին Պարսկաստանի ճանապարհը և նահատակվեցին Խանասորի դաշտում, Գարահիսար լեռան մոտ և Ջուխում։ Նահատակվածների թվում էր նաև հընչակյան կուսակցության Վանի մասնաճյուղի ղեկավար Մարտիկ Սարուխանյանը։ Նրան փոխարինելու նպատակով Փարամազը որոշեց իր խմբով անցնել Վան։ 1897 թ. վերջին նա արդեն Վանում էր, որի բնակիչների վիճակը այդ ժամանակ սոսկալի էր, քանի որ թուրքական և քրդական ուժերի կազմակերպած կոտորածի պատճառով զոհվել էին հարյուրավոր երիտասարդներ, իսկ գավառներից շատ հայեր գաղթում էին։ Հենց այս ծանր ժամանակ էր, որ 34 տարեկան Փարամազը իր մի քանի տասնյակ ընկերներով հասավ Վան։ Թուրքական իշխանությունները տեղեկություն ստացան նրա խմբի ժամանման մասին։ Սկսվեցին մասսայական խուզարկությունները։ Ոստիկանությանը հաջողվեց ձերբակալել Փարամազին, Մելքոն Մանուկյանին, Վարդանին, Արշավիրին և ուրիշների։ Բանտ նետվեցին նաև քաղաքի մի քանի բնակիչներ, ինչպես նաև Երամյան վարժարանի սաներ Արմենակ Միրզախանյանը, Փանոս Մարությանը և ուսուցիչ Մկրտիչ Տեր-Բարսեղյանը։ Բանտ նստածները մեղադրվում էին Թուրքիայի պատժական օրենսգրքի 45, 56, 58 և 62 հոդվածներով։ Փարամազին և նրա ընկերներին ամիսներ շարունակ թուրքական ոստիկանները խոշտանգում էին։ Վերջապես 1898 թ. սկսվեց նրանց դատավարությունը։

Փարամազը և նրա հետ դատարանի առջև կանգնածները համարձակորեն ասացին, որ իրենք դատարանին բացատրություն կտան այն ժամանակ միայն, երբ դատին ներկա գտնվեն օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները։ Հպարտ ու խրոխտ կեցվածքով Փարամազը դատարանում հայտարարում է, որ օսմանյան Թուրքիայում արդարություն չկա, ապա սկսում է մերկացնել հպատակ ազգերի նկատմամբ թուրքական կառավարության վարած կեղծ ու դաժան քաղաքականությունը։ Ըստ նրա, այդ բռնակալությունից

---

5 Սիրվարդ. Փարամազ (Մատթեոս Սարգսյան). կյանքն ու գործունեությունը. Փրավիտենս, 1954, էջ Ա։

6 Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության քառասնամյակին. Փարիզ, 1930, էջ 101—102։

7 ԱՍՕ (Տիգրան Հ. Օտյան). Դատաստան. Կ. Պոլիս, 1909, էջ 25։

ծնվեց հնչակյան կուսակցությունը, որը ցանկանում է ազատագրել իր ժողովրդին։ Դատարանում նա արտասանեց իր հայտնի ճառը, որի սկզբում, դիմելով դատարանի նախագահին, ասում է. «Դուք մեզ անվանում եք խռովարարներ, սրիկաներ, ավազակ-կողոպտիչներ, որոնք վրդովում են ժողովրդի անդորրությունը, սակայն մենք այդպիսիներ չենք, քանի որ չենք շահագործում ժողովրդին»։ Ապա նա հայտարարում է, որ օսմանյան կառավարությունը մի քանի տասնյակ տարի առաջ ծանր վիճակի մեջ էր դրել բալկանյան ժողովուրդներին, առաջացնելով խժդժություններ, վայրենի գործողություններ, որոնք քստմնելի տպավորություն են գործել քիչ ու շատ զգայուն սրտերի վրա[8]։ Այնուհետև Փարամազը սկսում է թվարկել այն սոսկալի փաստերը, որ կատարվել էին Արևմտյան Հայաստանում, որտեղ չորս տարվա ընթացքում կոտորվել էին 175 հազարից ավելի հայեր, կողոպտվել էր 80 հազարից ավելի ընտանիք, այրվել 2500 գյուղ։ Միայն Վանի Ղալբը փաշան 200 հոգի անմեղ մարդիկ է սպանել։ Արճակում թուրքական զինվորները եկեղեցում 450 հոգու ոչխարի պես մորթել են։ Ալջավազում ցորենի հորերի մեջ կենդանի թաղել է 40 հոգու, իսկ Սասունի դահիճ Զեքի փաշան կենդանի թաղել է 600 հոգու։ Ապականվել և այրվել են հայկական 570 եկեղեցիներ և 80 վանքեր, մոտ 300 եկեղեցիներ վերածվել են մզկիթի[9]։

Իր ճառում Փարամազը կանգ է առնում գյուղացիների ծանր տնտեսական վիճակի վրա, նշելով, որ գյուղացիներից երկու անգամ ավելի հարկեր են հավաքում, իսկ ինչ վերաբերում է բեդելին (զինվորագրության փոխարեն հարկը), ապա այն փոխանակ հավաքելու 21 տարին լրացածներից, հավաքվում է «ծծկերից, դեռ չծնվածից, նույնպես և մեռածներից»։ Թուրքիայում ճնշված են ոչ միայն հպատակ ազգերը, այլև թուրքերը։

Փարամազի ճառում հետաքրքրական տվյալներ կան տուրքերի մասին. իբրև օրինակ նա բերում է խաղողի տուրքը, որի ժամանակ հավաքում են վեց տուրք։ Այսպես. «նախ հողի տուրք (ջրինն էլ ավելի), հետո խաղողի պտղի տուրք, մի տուրք ևս՝ խաղողի շիրա շինելու համար, մի տուրք խաղողի չանչի համար, դարձյալ մի տուրք օղի քաշելու համար, մի տուրք ևս օղին և գինին վաճառելու համար. դեռ չենք ասում մի տուրք ևս դրանով պարապողի աշխատանքի համար»[10]։

Թուրքիայում հարկերը հավաքում են ոստիկանները, որոնք տարիներ շարունակ չեն ստանում իրենց աշխատավարձը և առանց վախենալու բռնում են կաշառակերության, ժողովրդին կողոպտելու ուղին։ Եվ ոստիկանի համար միևնույն է, թե կողոպտվողը լինելու է հայ, թուրք, քուրդ, ասորի և այլն։ Շարունակելով իր խոսքը, Փարամազը ասում էր, որ խիստ ծանր է բանտարկյալների վիճակը, որոնցից խոշտանգումների և ծեծելու միջոցով թուրքական ոստիկանները կարողանում են կորզել իրենց ձեռնտու ցուցմունքները։ Բերելով մի շարք օրինակներ այդ մասին նա եզրակացնում է, որ Թուրքիայում «օրենքը պաշտոնյաների կամայականությունն է», «արդարությունը ձեր տաճկական բառարանում նշանակում է կաշառք»[11]։

Փարամազը հայտարարում է, որ հայերը ցանկանում են ստեղծել «ինքնավար Հայաստան մը», որտեղ «բնակվողները առանց ցեղի և դավանանքի խտրության, ապրին սիրով եղբայրաբար, ազատ քաղաքական և տնտեսական ճնշումներից»[12]։ Ճառի վերջում նա ասում է, որ իրենք պահանջում են խղճի, մամուլի, ժողովների, խոսքի, «կյանքի, ինչքի ու պատվի ազատություն»։ «Մեր պահանջներին վերջ չկա,—շարունակում է նա,—քանի որ կյանքի պահանջներին ևս վերջ չկա և որովհետև մեր պահանջները չեն կարող օսմանյան

---

8 Փարամազի ճառը. Իմ դատավարությունս Տաճկաստանում 1898 թվին. Շիքակո, 1919, էջ 11։

9 Նույն տեղում, էջ 17—19։

10 Նույն տեղում, էջ 20։

11 Նույն տեղում, էջ 24։

12 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 22։

պետության տակ ապահովվել, ուստի մենք հեղափոխականներս մարդկային ամենայն իրավունքով պահանջում ենք՝ Հայաստանի ազգաբնակչության բաժանումը օսմանյան պետությունից»[13]:

Փարամազը շեշտում է. իրենք թթու ազգայնամոլներ չեն, այլ աննենգ ժողովրդասերներ և պահանջում են, որ «հայ, քուրդ, թուրք, արաբ, լազ, չերքեզ, ասորի, մինչև անգամ մութրուբ-գնչուն իր քվեով ընտրի իր կառավարիչը ու կառավարվի իրենց կարգված մարգերով ու օրենքներով, որը բարօրության հասնելու կարճ ճանապարհն է։ Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ամբողջ ազգաբնակչության համար»[14]։ Վերջում նա, նայելով իրեն դատողներին, անվախ հայտարարում է՝ անմեղ ժողովրդի ջարդը կազմակերպեցիք դուք, Հայաստանի գետերը դեռևս կարմրած են հայ ժողովրդի արյունով։

Փարամազի դատավարությունը սկսվեց 1897 թ. նոյեմբերի 18-ին և վերջացավ 1898 թ. փետրվարին։ Դատավարության ժամանակ արտասանած ճառը թուրքական իրականության դեմ ուղղված մի պամֆլետ է։

Փարամազի ժամանակակիցներից մեկը վկայում է, որ նա առանձնակի խոսակցությունների ժամանակ շատ զվարթախոս էր, սակայն «նույնքան ալ կրակ ու բոց կը դառնար, երբ հարցը գար ընկերային նյութերու, զարմանք պատճառելով այդ վտիտ մարմնեն արտաբերող այդ ջղուտ եռանդին վրա»[15]։

Թուրքական դատարանի վճռով Փարամազը դատապարտվեց մահվան, 15-ական տարի ստացան երևանցի Արշակը, պարսկաստանցի Վարդան Նազարբեկյանը, մշեցի Վարդանը, խլաթցի Ենգոն, կարճկանցի Գյուրջին, արճակցի Գևորգը։ Դատավճռի ընթերցումից հետո Փարամազը իր վերջին խոսքում ասել է. «Կախաղա՜ն և շղթա՜, մա՜հ և տանջանք... արհամարհում ենք մեր բոլոր էությամբ, մեր կարողությամբ։ Ձեր կախաղանների սյունները՝ ազատության աշտարակներ են և նրանց չվաններից կախած ճոճուն մարմինները հավիտենական նախատինք ներկա կարգերի և նրանց հեղինակների համար»[16]։

Փարամազին կախելու մասին Վանի դատարանի վճիռը ի կատար չածվեց. դատից հետո Վանի ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկու պահանջով Փարամազը և նրա հետ դատվող ռուսահպատակները ուղարկվում են Կովկաս և որոշ ժամանակ անց ազատվում կալանքից։

1903 թ. ցարական կառավարությունը իրականացրեց հայ եկեղեցական կալվածքների գրավումը։ Ցարի հրապարակած 1903 թ. հունիսի 12-ի օրենքի համաձայն բռնագրավվեցին եկեղեցական կալվածքները, փակվեցին հայկական դպրոցները, խոշընդոտներ հարուցվեցին հայ բարեգործական ընկերությունների դեմ և այլն։ Բռնկվեց համաժողովրդական ցասում։ Անդրկովկասի հայաբնակ վայրերում տեղի ունեցան միտինգներ ու ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում էին չհանձնել եկեղեցական գույքը և կալվածքները։ Բայց ցարական կառավարությունը զենքի ուժով կարողացավ գործադրել այդ օրենքը։

Այդ օրերին Փարամազը, գտնվելով Բաքվում, կազմակերպեց մի պատգամավորություն, որի գլուխն անցած եկավ Էջմիածին, հանդիպեց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հետ և կարդաց այն պահանջագիրը, որը կազմել էր նա իր ընկերների հետ։ Շատ չանցած Փարամազը և իր ընկերները մահափորձ են կազմակերպում Գոլիցինի դեմ, որի ժամանակ փոխարքան վիրավորվում է։

1905—1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Փարամազը հանդես եկավ իբրև ազգերի համերաշխության կողմնակից։ Նա իր ամբողջ էությամբ դեմ էր այդ կռիվներին և անձամբ այցելում էր «ադրբեջանցի պեկերու և գործիչներու գտնված շրջանները և կը համոզե, որ վերջ դրվի եղբայրասպան կռիվներուն»[17]։ Հարևան ազգերի միջև եղած անմիտ ընդհա-

13 Փարամազի ճառը. էջ 29—30։

14 Նույն տեղում, էջ 30։

15 «Երիտասարդ Հայաստան», 14 մարտի 1961։

16 Ա Ս Ս Ր. Նշվ. աշխ., էջ 43։

17 Փ ա ր ա մ ա զ (1863—1915). Պեյրութ, 1968, էջ 1։

ումները նրա համար խորթ էին և նա ամեն գնով ցանկացել է վերջ տալ դրանց։ Նրա այդ ջանքերի մասին կարդում ենք. «Զանդեզուրի շրջանի թաթար ժողովուրդը (1906) հազարավոր ստորագրություններով տասնյակ համախոսականներ, հարյուրավոր շնորհավորական նամակներ ունի թափած Ս. Դ. Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչություն՝ Փարամազի կատարած գործերի, առաքինությունների համար»[18]։

Հնչակյան կուսակցության Բաքվի վարչության 1908 թ. դեկտեմբերի մի արձանագրությունից երևում է, որ Փարամազը եղել է այդ կուսակցության լիազոր ներկայացուցիչը Բաքվում, իսկ 1908 թ. դեկտեմբերից Կոստանդնուպոլիս մեկնելուց առաջ ընտրվել է կուսակցության վարչության նախագահ[19]։

1908 թ. Թուրքիայում սկսվեց հեղափոխությունը, որի հաղթանակից հետո երիտասարդ թուրքերը, իշխանության գլուխ անցնելով, ժողովրդին և հպատակ ազգերին մեծ խոստումներ տվեցին, սակայն դրանք չիրականացան։ Թուրքական հեղափոխության հաղթանակից հետո Փարամազը շտապեց անցնել Կոստանդնուպոլիս, բայց լսելով կնոջ մահը մեկնեց հայրենի Մեղրի։ Մի քանի ժամ տանը մնալուց հետո Փարամազը մեկընդմիշտ թողնում է հայրենի Մեղրին, իր հարազատ տունն ու տեղը, որբացած երեխաներին և նորից մխրճվում պայքարի մեջ։ 1909 թ. նա Կոստանդնուպոլսում էր, ուր թուրքական լրտեսները նրան «գալու օրից սկսում են հետապնդել քայլ առ քայլ»[20]։ Հուլիս ամսին Թուրքիայի մայրաքաղաքում տեղի ունեցավ հնչակյան կուսակցության վեցերորդ համաժողովը, որին մասնակցում էին 75 պատգամավորներ։ Նրանց գլխավոր խնդիրն էր «ճշտել հնչակյան կուսակցության դիրքը հանդեպ օսմանյան պետության»[21]։ Համաժողովի մասնակից Ս. Հովվյանը գրում է, որ հանդիպեց շատերին, որոնց թվում նաև Փարամազին, որի մասին ասում է, թե այնտեղ էր նաև «հնչակյան հնագույն, բյուրեղային մաքուր գործիչ Փարամազը»[22]։ Համաժողովում ընդունվեց որոշում այն մասին, որ Թուրքիայում կուսակցությունը պետք է գործի «օրինական (լեկալ) հողի վրա, ցորչափ արդի օրինական իրավունքները չեն խլվիր աշխատավոր ժողովրդին ձեռքեն»[23]։ Համաժողովում օրակարգի այդ հարցի կապակցությամբ մի կրակոտ ճառ է ասում նաև Փարամազը։ Իր ելույթում Փարամազը պնդում էր, որ երիտթուրքերը ավելի վտանգավոր են քան Աբդուլ Համիդը։ «Ընկերներ,— ասել է նա,—պետք չէ խաբվել ժեռն թուրքերու այսօրվան մեղրածորան խոսքերեն, խոսքեր՝ որոնք կըլլան հայ հեղափոխական կուսակցությունները քնացնելու և անոնց ուժը տկարացնելու համար»[24]։

Համաժողովից հետո նա մեկնեց Ադաբազար։ Այստեղ ունեցած իր բազմաթիվ հանդիպումների ժամանակ նա քարոզում էր նախահարձակ չլինել, սակայն նախապատրաստվել սպասվող օրհասին և եթե պետք է՝ անցնել ինքնապաշտպանության։

Ադաբազարից հետո 1910 թ. նա Տիգրանակերտում էր, որի վիլայեթում, չնայած 1890-ականների կոտորածներին, ապրում էին ավելի քան 100 հազար հայեր։ Ժամանակակիցներից մեկի վկայությամբ Փարամազը Տիգրանակերտում ունեցած իր ելույթների ժամանակ երիտթուրքերին համարում էր «հայոց դահիճ» և գտնում էր, որ նրանք մի օր հայերի ջարդ պիտի կազմակերպեն, ուստի ժողովրդին խորհուրդ էր տալիս «արդ զինվեցեք և արթուն կացեք»[25]։

---

18 Նույն տեղում։

19 Մլի արխիվ, ֆ. 4045, ց. 132, գ. 1, էջ 14—16։

20 «Հայրենիք», Բոստոն, № 12 (287), դեկտեմբեր, 1949։

21 Հ մ ա յ ա կ Ա ր ա մ յ ա ն. Պատմություն հնչակյան կուսակցության. մասն Ա, Կ. Պոլիս, 1918, էջ 40։

22 Մլի արխիվ, ֆ. 4045, ց. 3, գ. 20—2, թ. 346։

23 Հ. Ա ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 42։

24 Փ ա ր ա մ ա զ, էջ 9։

25 Քառասնամյակ (1903—1943) «Երիտասարդ Հայաստանի», Նյու Յորք, 1944, էջ 270։ 280։

Փարամազն ուներ այն կարծիքը, որ հայերը կարող են փրկվել միայն ինքնապաշտպանությամբ և «պետք է պրպտել և գտնել ազատամիտ թուրքեր, միասնաբար հակազդելու ոճրային իթթիհատին»[26]։ Տիգրանակերտից ուղարկած իր նամակներից մեկում նա գրում էր, որ Սահմանադրությունը խաղաղություն չէ, այլ «զինադադար», և որ երիտթուրքերը որոշել են ենթակա ազգերից «որևէ մեկից «արյան տուրք» պահանջել՝ կոտորել։ Վայրը, այս անգամ էլ, պետք է լինի Հայաստանը, ենթական՝ հայը»[27]։

Այդ օրերին Տիգրանակերտում կազմակերպվեցին թատերական ներկայացումներ, բեմադրվեցին «Սանդուխտ կույս», «Անմահ ժիրայր» դրամաները և Փարամազի «Քամու բերածը քամին կը տանի» պիեսը։ Ժողովրդի հետ հանդիպումների ժամանակ նա նշում էր «ինքնապաշտպանության անհետաձգելի պահանջը», և քանի որ այդ ժամանակ երիտթուրքերը ցանկանում էին Տիգրանակերտում հայերի ջարդ կազմակերպել, նա ամեն ինչ արեց քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու կապակցությամբ. «Թշնամին, նշմարած ըլլալով հայոց կանխապատրաստությունը, բացարձակապես վախցավ նախահարձակ ըլլալ և ետ կեցավ գազանային մտադրութենե»[28]։

Տիգրանակերտից Փարամազը գնում է Սլիվան, Արդնմադեն, Մալաթիա, որտեղ ապրում էին մեծ թվով հայեր։ Մալաթիայում կարդացած դասախոսությունների մեջ ընդգծում էր, որ Թուրքիայում պետք է ժողովուրդները բարեկամ լինեն, առանց որի «հնարավոր չէ ժողովուրդներու խաղաղությունը, հանգիստ կյանքը ապահովել»[29]։

1904 թ. նոյեմբերի 2-ին Մալաթիայում գլխատվել էին երկու շապինգարահիսարցի հայեր՝ Հաբեթը և Հակոբը, որոնք մահից առաջ ասել էին. «Անմեղներ ենք։ Կը զոհվինք մեր ազգի սիրույն և տառապող մարդկության ազատագրության համար։ Մեր վրեժը ազատասերները թող առնին»[30]։ Երկու այս նահատակների գերեզմանի մոտ հավաքված բազմության առաջ ունեցած իր ելույթում Փարամազը ասել է.

«Հոն, ուր կախաղաններն են ճոճում,
Ազատությունն է մեզ զալիս,
Հոն, ուր մեռելներն են ննջում՝
Հարությունն է մոտալուտ»[31]։

Մի ամիս Մալաթիայում մնալուց հետո նա գնում է Խարբերդ, որի 20 հազար բնակիչներից 10 հազարը և վիլայեթի բնակիչների 50 տոկոսը հայեր էին։ Այստեղ նա մի քանի դասախոսություններ է կարդում, որոնց մեջ նորից առաջ է քաշում ազգերի իրավահավասարության հարցը։ 1912 թ. Փարամազը գտնվում էր Վանում, որտեղ նա մի քանի դասախոսություն է կարդում ժողովրդի համար։ Այդ ժամանակ արդեն հրապարակի վրա էր դրված Հայկական հարցը։ Խոսրով Թութունջյանի հուշերում նշված է, որ Փարամազը հոռետես էր «հայ բարենորոգումներու խնդրին վերապահված վախճանի մասին»։ Ըստ նրա այդ «գառան հոտը գայլին վստահել կնշանակե», ապա գտնում էր, որ պետք է միավորել հայկական բոլոր կուսակցություններին, որոնց առաջնահերթ խնդիրը «հայկական գավառներու ժողովրդի պաշտպանությունն է»[32]։

Երբ Փարամազը Վանում էր, Կոստանցա քաղաքում բացվեց հնչակյան կուսակցության 7-րդ համաժողովը։ Փարամազը համաժողովին ուղարկեց մի

---

26 Սեդրակ Շահեն. Հուշեր և փուշեր կյանքի ճանապարհին. հ. Ա, Լոս Անճելես, էջ 56—57։

27 Քսան կախաղանները, կազմեց Երվանդ Զորուրյան. Կ. Պոլիս, 1921, էջ 42—43։

28 Տիգրան Մկունդ. Ամիտայի արձագանքները. հ. Բ, Նյու Յորք, 1953, էջ 284։

29 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 71։

30 Նույն տեղում, էջ 77։

31 Նույն տեղում, էջ 76։

32 «Վարագ», Բեյրութ, № 62, հուլիս, 1968։

զեկուցագիր, որի մեջ խոսում էր հայ ժողովրդի ծանր դրության մասին։ «Իմ այցելած գավառներուն մեջ,—գրում էր նա,—իթթիհատի զուլումը չափ ու սահման չունի», ապա գտնում էր, որ երիտթուրքերի կառավարությունը «Հայաստանը հայ արյունով ողողելու է»[33]։ Հնչակյան 7-րդ համաժողովը Փարամազին ընտրեց վարչության անդամ և որոշեց «պաշտպանել Հայաստանի քաղաքական ինքնավարությունը՝ անջատ Թուրքիայից»[34]։

Վանից Փարամազը անցնում է Կոստանցա, ապա՝ Եգիպտոս։ Եգիպտոսում նրա անցկացրած կյանքի մասին Ս. Գուլյանը գրում է, որ նրա ջանքերով աշխուժություն մտավ «ժողովրդական լայն խավերուն և մանավանդ աշխատավոր ու երիտասարդական շրջաններուն մեջ»[35]։

1914 թ. մայիսի մեկին «Հնչակում» լույս տեսավ Փարամազի վերջին հոդվածը «Հայի պահանջը» վերնագրով։ Հոդվածում նշվում էր, որ հեղափոխությունից հետո հայերը այն կարծիքին էին, թե կստեղծվեն իրենց համար փոքր ի շատե տանելի պայմաններ, սակայն նրանք շատ շուտով հիասթափվեցին։ Հայ հայդուկը, լսելով ընդունված սահմանադրության մասին, իջավ լեռներից, զենքը դեն նետեց և ապա «մշակույթի գործիքներն առավ իր քանդված տունը, իր անթեղված օջախը վերաշինելու, կյանքի հրճվանքը ճաշակելու»[36]։ Հայը շատ շուտով համոզվեց, որ բռնապետական ժամանակաշրջանի հետ համեմատած շատ բան չի փոխվել և երիտթուրքերի տիրապետությունը հանդիսանում է «շարունակությունը, ճիշտ հար և նմանը նախկինի, իր դարավոր վշտերի, իր հոգու փլուզումների, իր ավեր ու կոտորածի»։ Հոդվածի հեղինակը գտնում է, որ հայը սխալվեց և այն էլ «պատմական անօրինակելի սխալով սխալվեց, սխալվեց հայ ֆետային, երբ ոգևորության ազդեցության տակ կարողացավ ինքն իրեն հավատացնել, թե օսմանյան տիրապետության տակ, տիրապետությունն տարված նեղցած ու գծուծ շովինիզմով և իսլամական անհամբերատար աշխարհայացքով, կարող է պաշտպանվել բաղկացուցիչ ազգերի շահը՝ տնտեսական, հոգեկան, մտավոր»[37]։ Փարամազը գտնում էր, որ հեղափոխությունից հետո կազմակերպված կոտորածները էնվերի, Թալեաթի և այլոց գործերն են։

Քննադատելով երիտթուրքերի ընդունած սահմանադրությունը, նա գտնում է, որ այն պայմաններ չստեղծեց, որպեսզի երկրում ապրող ժողովուրդը հնարավորություն ունենա «իր պատվի, իր մալ ու մյուլքի տերը դառնալու, իր հանդի մեջ ու ծածկի տակ ապահովություն տեսնելու, իր հոգեկան վայելքները ճաշակելու»[38]։ Հայաստանի բարենորոգումների մասին ասվածները զավեշտ են, քանի որ այն օրերին, երբ ծրագիրը քննարկման էր դրված, «օրենքը խլում էր հայի հողը, հայի աղջիկը, հայ ազգության ստորոգելիները՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, այն էլ այսօր, այն էլ հենց այսօր, երբ արտաքին ճնշումների տակ ստիպված ստորագրում է հայի բարենորոգումները»։ Այսպիսով, հայը օսմանյան հեղափոխությունից ոչինչ չստացավ և «Հայկական հարցը մնում է հարց, քանի որ նա՝ հայը, դուրս չեկավ «ռայայի» ամոթապարտ կացությունից»[39]։ Հոդվածի երկրորդ մասը կոչվում է «Հայը մեռնում է կաթիլ-կաթիլ», սակայն ի՞նչ անել, որ նա չմեռնի. Փարամազը այդ կապակցությամբ գրում է. «Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու և անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայը ապրի» և եթե նրա վրա հարձակվեն սպանելու համար, հայը պետք է դիմի ինքնապաշտպանության, քանի որ «ինքնապաշտպանության խնդիր կա դրված մեր առջև, մեր լինել-չլինելու խնդիրը»[40]։

33 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 84։
34 Քսան կախաղանները, էջ 15։
35 «Արարատ», Բեյրութ, 28 հուլիսի 1960։
36 «Հնչակ», № 1, մայիս, 1914, էջ 8—10։
37 Նույն տեղում։
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում։
40 Նույն տեղում։

1914 թ. հուլիսի 16-ին Կոստանդնուպոլսում սկսվեցին հնչակյանների բանտարկությունները։ Ձերբակալվածների թիվը սկզբում հասնում էր 120 հոգու, որոնց մեջ էին Փարամազը, Լազոն, Արծրունին, Հ. Ճահանկուլյանը, Վ. Ջեյթունցյանը, դոկտ. Պենեն (Պետրոս Թորոսյան), Ռ. Կարապետյանը և շատ ուրիշներ։ Խուզարկությունների ժամանակ Փարամազի և Ռ. Կարապետյանի մոտ գտնվեցին Կ. Պոլսում և գավառներում բնակվող բազմաթիվ անձանց հասցեները։ Գտնվեցին նաև մեծ քանակությամբ շրջաբերականներ, հին ծրագրեր, նամակներ, Կոստանցայի ժողովի որոշումները։ Ձերբակալությունների հետ միասին փակվեց հնչակյանների «Կայծ» թերթը։ Այդ օրերի մասին ժամանակակիցներից մեկը հետագայում գրում է, որ «Փարամազ ձերբակալվել է տունեն դուրս ելած ատեն. Սաքոն ճաշարանին դռան առջև։ Տոքտ. Պենեին տուն խուզարկեր և կարգ մը թուղթեր գտեր ու տարեր են»[41]։

Ձերբակալվածները մեղադրվում էին նրանում, որ կապված են երիտթուրքերի վարած քաղաքականությունից դժգոհ, Փարիզ փախած Շերիֆ փաշայի հետ և նպատակ ունեին տապալել երիտթուրքերի կառավարությունը ու այնտեղ էլ ազատ Հայաստան ստեղծել։ Շատ չանցած բանտարկվածների մի մասը ազատվեց «ազդեցիկ միջնորդությանց, կաշառքի միջոցով»[42], իսկ մնացածները կանգնեցին թուրքական դատարանի առաջ։

«Մշակում» 1914 թ. օգոստոսին տպագրված մի հաղորդման համաձայն քննությունները անձամբ վարում էին Թուրքիայի ներքին գործոց մինիստր Թալեաթը և մայրաքաղաքի ոստիկանապետ Բեդրին[43]։ Փարամազին և իր ընկերներին դատում էր պատերազմական ատյանը, հնարելով սուտ մեղադրանք նաև այն մասին, որ նրանք նպատակադրվել էին ահաբեկումների միջոցով շարքից հանել երիտթուրքերի ղեկավարներից ոմանց և այդ նպատակով Կովկասից և Եգիպտոսից մարդիկ էին ժամանել Կոստանդնուպոլիս, «իսկ Փարամազն էլ եկած է եղել գործը ղեկավարելու»[44]։

Շուտով սկսվեցին պատերազմական գործողությունները Ռուսաստանի դեմ և երիտթուրքերի պատերազմական ատյանը դատավարությունը տարավ այնպես, ինչպես ինքն էր ցանկանում։ Բանտում եղած ժամանակ ընկերներից մեկը Փարամազին հարցնում է, թե երիտթուրքերի հալածանքները ուղղված են միայն հնչակյանների, թե հայ ժողովրդի դեմ, նա պատասխանում է. «Իթթիհատի ոխերիմ քաղաքականությունը նախ մեզմով պիտի սկսի, քանզի անոնց գործելակերպը քննադատելով բողոքեցինք և չդաշնակցեցանք։ Բանտերը, աքսորները, կախաղանները ասկե վերջ պիտի հրճվին... Հայը իր Գողգոթան պիտի բարձրանա, արյուն ու սուգի չարագուշակ հոտեր կուգան...»[45]։

Բանտում գտնվող բանտարկյալների շորերը լվանում էին երկու հայ քույրեր. Փարամազը, օգտվելով առիթից, նրանցից մեկին է հանձնում իր թաշկինակը, խնդրում է, որ առանց լվանալու հանձնել պատրիարքին։ Անվախ ու կրակոտ հայրենասերը գիտեր, որ շուտով զրկվելու է կյանքից և առանց վախենալու պատրիարքին ուղարկված իր թաշկինակի վրա գրել էր. «Սթափեցե՛ք։ Դիմեցե՛ք ինքնապաշտպանության։ Ջարդը ման է գալիս հայերի գլխին...»[46]։

Պատերազմական ատյանի առջև կանգնած Փարամազը հայտարարում է, թե «Թալաաթն է, որ դուրսեն կը ղեկավարե այս ատյանը»[47]։ Ամիսներ տևող դատական պրոցեսից հետո ատյանը 20 հոգու մահվան դատապարտեց։ Շատ չանցած սուլթանը վավերացրեց այդ վճիռը և սուլթան Բայազետի հրապարակում 1915 թ. հունիսի 2-ին, երբ արդեն երիտթուրքերը ամիսներ առաջ սկսել

41 «Երիտասարդ Հայաստան», 12 օգոստոսի 1960։
42 Հ. Ա ր ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 61։
43 «Մշակ», 1 օգոստոսի 1914։
44 «Հայրենիք», № 12 (287), դեկտեմբեր, 1949։
45 «Արձագանք Փարիզի», № 21, 10 փետրվարի 1917։
46 «Երիտասարդ Հայաստան», 16 հունիսի 1959։
47 Ս ի ր վ ա ր դ. նշվ. աշխ., էջ 99։

էին արևմտահայերի տեղահանությունն ու ջարդը, դատավճիռը ի կատար ածվեց։

Դատավարության վերջին նիստին Փարամազը, դիմելով նախագահողին, հպարտ ու անվախ ասել է. «Դուք քաջալերեցիք ոճիրն ու հարստահարությունը և լռեցնել ջանացիք բողոքի մեն մի արտահայտություն։ Դուք մեր կենսական հյութով ապրեցաք դարեր շարունակ և երբեք չուզեցիք, որ այդ հյութի աղբյուրը իրավունք ունենա կանգուն մնալու և արտադրելու։ Դուք ճնշեցիք մեզ՝ կամազուրկ բայա էինք ու ողբալի համբերատարությամբ կը հանդուրժեինք ամեն ։տորացման։ Դուք ահաբեկեցիք մեզ, երբ օր մը ուզեցինք թերմաշ գոյության մը տարրերը խնդրել մեր իշխանավորներեն... Դուք մեզ ջարդել սկսաք, երբ օրին մեկը վճռեցինք մեր արժանապատվության համապատասխան դիրքի վրա բարձրանալ։ Դուք մեզ օրենքի պաշտպանութենեն դուրս ձգեցիք, երբ իթթիհատյան պոչատ սահմանադրության արտոնած իրավունքներեն օգտվել ուզեցինք»[48]։

Կախվելուց առաջ Փարամազը անվախ հայտարարել է. «Դուք մեր մարմինը միայն կրնաք սպանել, բայց մեր գաղափարները՝ սոցիալիզմը՝ ոչ»[49]։ Քսան կախվածների դատավճիռը իրագործելու ժամանակ հայերից միակ ականատեսը քահանա Գալուստ Պողոսյանն էր, որը վկայում է, որ նրանց մեծ մասը «անվհեր կերպով կը դիմագրավեին մահվան և կարհամարհեին զայն»։ Այնուհետև բոլորը միաբերան բացականչեցին «Կեցցե՛ Հայաստան, կեցցե՛ Հայաստան», իսկ դոկտոր Պենեն գոռաց. «Մեզ, քսանս կը կախեք, բայց քսան հազարներ պիտի հետևին մեզի»[50]։

Փարամազի և նրա 20 ընկերների մասին գրվեցին շատ բանաստեղծություններ, սակայն նրանցից լավերից մեկը պատկանում է Վահան Թեքեյանի գրչին, որտեղ ասված է.

...Բայց և ինչպես, ամենքդ ալ վեջին
պահուն ձեր դիմաց
Երազային, շատ պայծառ, ուրիշ արև մը
տեսաք,
Ու ճռճեցաք օդին մեջ՝ զայն խմելե վերջ
ցըհազ...[51]

Փարամազի գրչին են պատկանում մամուլում լույս տեսած մի շարք հոդվածներ և երեք պիես։ Փարամազը, սկսած 1910 թ., «Արևելք» լրագրում «Հայր Սիվա» կեղծանունով մի շարք հոդվածներ տպեց։ Նա հոդվածներով հանդես է եկել նաև «Հնչակ», «Արևելք», «Կայծ», «Վան Տոսպ» և այլ թերթերում։

1913 թ. Վանում եղած ժամանակ Փարամազը «Վան Տոսպի» երկու համարներում հայկական տառերի 1500 ամյակի կապակցությամբ տպագրեց իր «Տառերի գյուտի ազդակները (համառոտ ակնարկ)» հոդվածը։ Պիեսները հրատարակվեցին նրա մահից մի քանի տարի անց, Ամերիկայում[52]։ Նրանցից մեկը «Պաքոն» է, որի մեջ տրված է արևելյան բռնակալ Սելիմի կյանքը (նկատի ունի Աբդուլ Համիդին), որը ամբողջ երկիրը իրեն ենթարկելով, այն համարում է աստծու կողմից իրեն տրված սեփականություն և ապրում է շքեղության մեջ։ Պիեսի գլխավոր հերոսը՝ Պաքոն, աղքատ է, ապրում է մի

48 Հ. Ա ր ա մ յ ա ն. Նշվ. աշխ., մաս Գ, Կ. Պոլիս, 1919, էջ 40։

49 Փ ա ր ա մ ա զ, էջ 4։

50 Հարգանք սոցիալ-դեմոկրատ հնչակյան քսան անմահներուն. Պեյրութ, 1957, էջ 22—23։

51 «Արարատ», 17 հունիսի 1962։

52 Պաքո, գրեց Փարամազ. Շիքակո, 1919։ Քամու բերածը քամին կը տանե, երդախառն թատերագրություն երեք արարվածով, գրեց՝ Փարամազ. Շիքակո, 1919։ Փ ա ր ա մ ա զ. Ցեռքերը վեր կամ ճուղուպրիստները, թատերագրություն երեք գործողությամբ իրական կյանքից (դեպքը տեղի է ունենում 1907 թ. Բաքվում). Շիքակո, 1917։

ողորմելի խրճիթում, նրա կինը՝ Բասոն, ճախարակ մանելով երգում է Ղ. Աղայանի «Մանիր, մանիր իմ ճախարակ» երգը։ Երեխաները սոված են, հաց են խնդրում, օրորոցի մանուկը՝ կաթ և քանի որ մայրը նույնպես չի սնվել՝ կաթ չկա։ Քրդական հրոսակները տարել են աղքատ Պաքոյի անասունները, իսկ վաշխառուն և հարկահավաքը՝ նրա կալի բերքը։

Իր այդ պիեսում Փարամազը հասարակ, աղքատ մարդկանց կոչ է անում կռվի ելնել բռնության դեմ և եթե հարկ է՝ ընկնել այդ կռվում, որպեսզի մյուսները ապրեն։ Նա գտնում է, որ համբերելով ժողովուրդը դաժան ու բռնակալ Սելիմից ոչինչ չի ստանա։

«Քամու բերածը քամին կը տանե» պիեսը առաջին անգամ բեմադրվեց Տիգրանակերտում։ Պիեսում իրար կողքի հանդես են գալիս ուսումնասերը, տգետը և վաշխառուն։ Վերջինս անընդհատ ձգտում է սեփականացնել ժողովրդի ունեցվածքը և նրա հաշվին ուռճանալ։ Այդ կարգի մարդ է Մարտիկ աղան, որը դեմ է ժողովրդին լուսավորելու գործին, գտնում է, որ նրան կրթելն անհնարին է, քանի որ «ժողովուրդը գոլեճ մոլեճ չի կրնար հասկնալ»։ Սակայն այդ կարծիքին չեն աղայի տղան՝ Տիգրանը և աղջիկը՝ Արուսյակը, որոնք ջանք չեն խնայում ժողովրդին կրթելու համար։ Տիգրանը համոզված է, որ կյանքի վատ պայմանները հնարավոր է փոխել ժողովրդին կրթություն տալու միջոցով. այդ կարծիքին են նաև Թովմաս աղայի կինը. նրանք գտնում են, որ «մեր ժողովուրդը, մեր ազգը եթե կուզե ապրիլ, հրճվիլ և ոչ թե լալկան կնոջ նման լալ, պետք ունի լավ, նորատիպ և կյանքի գոյության համար կռվի զենքերու. իսկ այդ դարբնոցը, ուր այդ զենքերը պիտի կռվին, կոփվին, միայն ու միայն լավ, կանոնավոր և օրինակելի դպրոցն է։ Երկրի վրա եղած դարմանը երկնքի մեջ փնտրելը փիլիսոփայական չէ, և ոչ էլ օրինազանցական»[53]։

Հետաքրքրական է այս պիեսում վաշխառու Կարապետ աղայի և նրանից տոկոսով փող խնդրող երեք գյուղացիների խոսակցությունը։ Աղան գտնում է, որ իրեն հիշում են միայն պարտք խնդրելիս։ Գյուղացիները, սակայն, թվում են, թե քանի անգամ են նրան ձրի մթերքներ բերել։ Կարապետ աղայի կինը՝ Պայծառը նույնպես տոկոսով դրամ է տալիս կանանցից շատերին։ Պիեսի մեջ երգում են Ավ. Իսահակյանի «Ա՜խ մեր սիրտը լիքը դարդ, ցավ» և այլ երգեր, ապա «Ալ այլուխս» ժողովրդական երգը։

Երրորդ պիեսը՝ «Զեռքերդ վեր կամ ճուղուպրիստները», բաղկացած է երեք գործողությունից։ Պիեսում ներկայացված են անիշխանականը, սոցիալ-դեմոկրատը և սոցիալ-հեղափոխականը։ Պիեսի գործող անձերից է դրամի ուժով ուռճացած Ավետիք Օսիպովը, որի կողքին կանգնած է գործազուրկ մարդը և մտածում է, թե ինչպես պահի ընտանիքը։ Օսիպովի ընտանիքը շատ դրամ ունի և զեղխ կյանք է վարում։ Օսիպովը չի ցանկանում օգնել հայ դպրոցին, գտնելով, որ ինքն է դրամը վաստակել և չի կարող տալ «խալխի լակոտների համար»։ Հեղինակը խիստ ծաղրի է ենթարկում հայ բուրժուական ընտանիքը՝ իր ամբողջ էությամբ։ Պիեսն առաջին անգամ բեմադրվեց Տիգրանակերտում և ապա 1913 թ. երկու անգամ Վանում։

Փարամազը հանդիսանում է XIX դարի վերջին քառորդի և XX դարի սկզբի հայ ազգային ազատագրական շարժման կարկառուն գործիչներից մեկը, որը տասնամյակներ շարունակ թողեց տունը, ընտանիքը և իր ժողովրդի համար չխնայեց իր կյանքը, անգամ կախաղան բարձրանալու ժամանակ մնաց անվեհեր և անընկճելի։

---

53 Քամու բերածը քամին կտանի... էջ 14—15։

ПАРАМАЗ (МАТТЕОС САРКИСЯН)

Доктор ист. наук А. М. ПОГОСЯН

Резюме

Один из выдающихся деятелей армянского национально-освободительного движения, известный революционер, гнчакист Маттеос Саркисян (1863--1915) родился в селе Мегри, получил там начальное образование, затем учился в Эчмиадзинской семинарии, из которой был отчислен в конце 1883 г. Долгие годы был учителем в армянских школах. Вел активную пропаганду за освобождение армян Западной Армении от турецкого ига. В 1897 г. Парамаз со своей группой патриотов-добровольцев находился в г.Ване, где и был арестован. Известна его боевая речь в суде, в которой он ярко и аргументированно показал тяжелое положение народов Турции. Суд приговорил его к смертной казни. Однако, при содействии русского вице-консула, как русскоподданный он был отправлен на Кавказ. После революции 1908 г. Парамаз был в разных городах и селах Турции, знакомился с положением армян и политикой младотурок. В своих речах и статьях он разоблачал младотурок, которые подготавливали геноцид западных армян. В 1914 г. он и его ближайшие товарищи были арестованы и в 1915 г. повешены в Стамбуле.